

2012թ. խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 462 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2012թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 462 հարկ վճարողների 2011 և 2012 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2012թ. առաջին եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 625.9 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճել է 10.6 %-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել են 19.4 %-ով և կազմել 231.6 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները կազմել են 85.5 մլրդ դրամ նախորդ տարվա նույն եռամսյակի 70.4 մլրդ դրամի փոխարեն կամ ավել 15.1 մլրդ դրամով:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2012թ.-ի առաջին եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 35.5 մլրդ. դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2012թ.-ի առաջին եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 69.6 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2012թ.-ի առաջին եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 54.5 %-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 40 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 13 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 3.9 մլրդ. դրամի չափով:
7. 01.04.2012թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 93.5 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 52.2 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 25.7 մլրդ դրամ: Նշված

Ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 3.9 մլրդ դրամի չափով կամ 11.6 %-ով ավել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 2.8 մլրդ դրամի չափով կամ 397.3 %-ով ավել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 4791 մարդով կամ 3.6%-ով, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների աճը կազմել է 8.9 %: